ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

ՀՀ պաշտպանության նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2»** ծածկագրով մրցույթի արդյունքում **2019 թվականի մարտի 18-ին** կնքված **N ԷԱՃԾՁԲ-4/2-3** ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) **2019 թվականի մայիսի 23-ին** կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսումը:

Փոփոխության նկարագրություն՝ Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի: Կատարողն պարտավորվում է Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Համաձայնագրով նախատեսված բեռնատարների վերանորոգման ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ծառայությունների գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայության արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ծառայությունների տեխնիկական բնութագիրը սահմանված է Պայմանագրով: Համաձայնագրով Կատարողի կատարման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.13 կետը: Գնման համար ֆինանսական միջոցները նախատեսված են ՀՀ կառավարության 2019թ. Պետական բյուջեով հաստատված պետության կարիքների համար գնումների պլանում 04.05.19թ. ծանուցում N 39-ՊՆ փոփոխությունների և/կամ լրացումների մեջ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Վ. Սահակյանին:

Հեռախոս՝ 010-29-43-53:
Էլ. փոստ՝ ***v.sahakyan@mil.am:***
Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

Հավելված N 1
N ԷԱՃԾՁԲ-4/2-3 պայմանագրին կից N 1 Համաձայնագրի

Ծառայությունների գնման ժամանակացույց

Հ/Հ	Անվանումը	Հ/մ	Առավելագույն գումարը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	Կատարողին վճարվող գումարի գործակից	Գնման ժամանակացույց
4	ՀԻԼ ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով)	դրամ	8 000 000	1	0.982	Ծառայությունների մատուցումը 2019թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ: Ըստ ՀՀ ՀՈՒ սպառազինության վարչության հայտերի:

Հավելված N 2
N ԷԱՃԾՁԲ-4/2-3 պայմանագրին կից N 1 Համաձայնագրի

Ծառայությունների վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	CPV դասակարգման կոդը	Վճարումը կիրականացվի 2019թ. համապատասխան ամիսներին, ընդ որում՝						
			Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ
4	ՀԻԼ ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով)	50111220/523	2200000	4400000	4400000	4400000	8000000	8000000	8000000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԷԱՇՁՁԲ-4/2-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 27.05.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից «Սլացք» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ա. Ահարոնումյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 18.03.2019թ. կնքված № ԷԱՇՁՁԲ-4/2-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Կատարողն պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Համաձայնագրով նախատեսված բեռնատարների վերանորոգման ծառայությունների (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ծառայությունների գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունների արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ծառայությունների տեխնիկական բնութագիրը և ծառայությունների, ապրանքների նախահաշվային միավորի գները սահմանված է Պայմանագրով:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն Կատարած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 4.2 և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՍԼԱՑՔ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Վանաձոր, Թևոսյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 220053333435000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 06901582
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
Մ. Ղամբարյան	Ա. Ահարոնյան

Հավելված N 1
N ԷԱՃԾՁԲ-4/2-3 պայմանագրին կից N 1 Համաձայնագրի

Ծառայությունների գնման ժամանակացույց

Հ/Հ	Անվանումը	Հ/մ	Առավելագույն գումարը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	Կատարողին վճարվող գումարի գործակից	Գնման ժամանակացույց
4	ՀԻԼ ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով)	դրամ	8 000 000	1	0.982	Ծառայությունների մատուցումը 2019թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ: Ըստ ՀՀ ՀՈՒ սպառազինության վարչության հայտերի:

Հավելված N 2
N ԷԱՃԾՁԲ-4/2-3 պայմանագրին կից N 1 Համաձայնագրի

Ծառայությունների վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	CPV դասակարգման կոդը	Վճարումը կիրականացվի 2019թ. համապատասխան ամիսներին, ընդ որում՝						
			Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ
4	ՀԻԼ ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով)	50111220/523	2200000	4400000	4400000	4400000	8000000	8000000	8000000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են անողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Սլաք» ՍՊԸ
Տնօրեն

Ա. ԱՍԱՏՐՈՒՄՅԱՆ